ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի միջև

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը (**այսուհետ՝ Պաշտպան**) և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ՝ Պալատ**) (այսուհետ միասին՝ Կողմեր),

Ղեկավարվելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կառուցակարգերի կատարելագործման և գործնականում դրանց իրացման իրական երաշխիքների ամրապնդման հիմնարար նպատակներով,

Հիմք ընդունելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան ապահովելու բարձր առաքելությունը,

Կարևորելով Հայաստանի Հանրապետությունում Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների և փորձի ներդրման, այդ թվում՝ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների իրացման գործում Պաշտպանի և փաստաբանների դերը,

Հաշվի առնելով խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման գործում Կողմերի իրականացրած առանձնահատուկ դերը,

Բարձր գնահատելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության գործում Կողմերի արդյունավետ համագործակցության նշանակությունը,

կնքեցին համագործակցության սույն հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. Հուշագրի նպատակը

Սույն հուշագրի նպատակն է սահմանել Կողմերի միջև համագործակցության ուղղությունները, ինչպես նաև կանոնակարգել դրա պայմանները և եղանակները:

Հոդված 2. Համագործակցության ուղղությունները և եղանակները

Կողմերը համաձայնում են համագործակցել հետևյալ ուղղություններով և եղանակներով՝

2.1. փաստաբանների կողմից իրենց գործունեության ընթացքում Մարդու իրավունքների խախտումների դեպքերի վերաբերյալ Պաշտպանին տեղեկություններ են տրամադրվում, և դրանց հիման վրա Պաշտպանի կողմից իր լիազորությունների սահմաններում համապատասխան միջոցներ են ձեռնարկվում, այդ թվում՝ արագ արձագանքման, ինչպես նաև որպես խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ազգային անկախ մեխանիզմ՝ համապատասխան հաստատություններ մոնիթորինգային այցերի իրականացման միջոցով,

2.2. փաստաբանների տրամադրած տեղեկությունների հիման վրա իրականացված միջոցառումների արդյունքների վերաբերյալ Պաշտպանի կողմից հաղորդում է ներկայացվում Պալատ,

2.3. Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում օրենսդրական և իրավակիրառման հարցերում միջազգային իրավական չափանիշների, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հետ անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքերում Կողմերը համապատասխան տեղեկություններ են տրամադրում միմյանց՝ իրենց իրավասությունների շրջանակներում այդ խնդիրների լուծմանն ուղղված

գործուն քայլեր ձեռնարկելու նպատակով,

2.4. փաստաբանների գործունեության ընթացքում Մարդու իրավունքներին առնչվող խնդիրների վեր հանման և ամփոփման հիման վրա Պալատի կողմից Պաշտպանին ներկայացվում են օրենսդրական փոփոխությունների առաջարկներ, և Պաշտպանի կողմից իր լիազորությունների սահմաններում համապատասխան օրենսդրական փոփոխություններ են նախաձեռնվում,

2.5. Պաշտպանի կողմից իր գործունեության ընթացքում վեր հանված խնդիրների ամփոփման հիման վրա տեղեկություններ են ներկայացվում Փաստաբանների պալատ,

2.6. ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից ունկնդիրների համար նախատեսված ծրագրերում ներառվում են դասընթացներ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ, ինչպես նաև այդ ծրագրերը կազմելիս հաշվի են առնվում Պաշտպանի տարեկան հաղորդումներն ու արտահերթ զեկույցները,

2.7. ՀՀ փաստաբանական դպրոցում Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող հատուկ թեմաներով դասախոսություններ են անցկացվում Պաշտպանի աշխատակազմի հրավիրված մասնագետների կողմից,

2.8. Պաշտպանի աշխատակազմում կազմակերպվում և անցկացվում է ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրների ուսումնական այցերը,

2.9. Պալատի խորհրդի առաջարկի հիման վրա Պաշտպանը քննարկում է օրենքների սահմանադրականության հարցով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու հարցը,

2.10. Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում Կողմերի նախաձեռնությամբ անցկացվում են մասնագիտական քննարկումներ և խորհրդակցություններ, մասնագիտական գրականության փոխանակում,

2.11. Անհրաժեշտության դեպքում Կողմերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբեր են ձևավորվում՝ համատեղ վերլուծություններ, ուսուցման ծրագրեր և գիտագործնական ուղեցույցներ մշակելու նպատակով,

2.12. Կողմերի պաշտոնական կայքէջերում տեղադրվում են միմյանց՝ որպես համագործակցող կառույցների վերաբերյալ տեղեկություններ,

2.13. Սույն հոդվածով նախատեսված համագործակցության ուղղությունները սահմանող դրույթները չեն սահմանափակում Կողմերի համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ բնագավառներում:

Հոդված 3. Պատասխանատու ներկայացուցիչները

3.1. Սույն հուշագրով նախատեսված համագործակցության արդյունավետ իրականացման նպատակով Պաշտպանը և Պալատի նախագահը նշանակում են պատասխանատու ներկայացուցիչներ:

3.2. Պատասխանատու ներկայացուցիչները համակարգում են Կողմերի հաղորդակցությունները, կազմակերպում են համատեղ աշխատանքային հանդիպումները, խորհրդակցությունները և փաստաթղթերի մշակումը:

Հոդված 4. Ֆինանսական դրույթներ

Կողմերն ընդունում են, որ սույն հուշագրի շրջանակներում չեն կարող առաջանալ ֆինանսական կամ այլ նյութական պարտավորություններ, բացառությամբ, երբ Կողմերը լրացուցիչ համաձայնագրերով հաստատում են նման պարտավորությունները համագործակցության որևէ ուղղությամբ իրականացվող համատեղ ծրագրի շրջանակում:

Հոդված 5. Հուշագրի գործողության դադարեցումը կամ դրանում փոփոխությունների կատարումը

5.1. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ ոչ ուշ, քան 60 (վաթսուն) օր առաջ այդ մասին մյուս կողմին գրավոր ծանուցելով:

5.2. Հուշագրի գործողության դադարեցման դեպքում նախկինում Կողմերի կնքած և ֆինանսավորած լրացուցիչ համաձայնագրերը շարունակում են գործել մինչև դրանց գործողության ավարտը, եթե Կողմերը փոխադարձ համաձայնությամբ այլ որոշում չեն կայացնում:

5.3. Հուշագրում փոփոխությունները կատարվում են փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Համապատասխան փոփոխությունները բովանդակող փաստաթղթերը կցվում են Հուշագրին և կազմում դրա բաղկացուցիչ մասը:

5.4. Հուշագրով նախատեսված համագործակցության շրջանակում Կողմերը կարող են համատեղ ծրագրերի իրականացման նպատակով կնքել լրացուցիչ համաձայնագրեր, որոնք չեն կարող հակասել Հուշագրին:

Հոդված 6. Տարաձայնությունների կարգավորումը

Սույն հուշագրի դրույթների մեկնաբանության հետ կապված տարաձայնությունները ենթակա են կարգավորման Կողմերի միջև բանակցությունների միջոցով:

Հոդված 7. Եզրափակիչ դրույթներ

7.2. Հուշագիրը բացառիկ իրավունքներ չի վերապահում: Կողմերն ազատ են Հուշագրով նախատեսված համագործակցության առարկայի վերաբերյալ համաձայնագրեր և հուշագրեր կնքել այլ անձանց կամ մարմինների հետ:

7.3. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7.4. Հուշագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է հուշագրի մեկական օրինակ:

7.5. Հուշագիրը ստորագրված է Երևան քաղաքում, 2016 թվականի հունիսի 7-ին՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի վարչական շենքում:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ	**Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան**
Արա Զոհրաբյան	Արման Թաթոյան